Մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Արմավիր քաղաքի հիմնադրման օրվա առթիվ

26.06.2020

Արմավիր քաղաքի հարգելի բնակիչներ, սիրելի արմավիրցիներ, Շնորհավորում եմ բոլորիս մարզկենտրոն Արմավիրի՝ նախկին Հոկտեմբերյան քաղաքի հիմնադրման 89-րդ տարեդարձի առթիվ:

Արդեն 9-րդ տասնամյակի շեմին գտնվող Արմավիրը հասցրել է ամայի տարածքից վերածվել շենացող քաղաքի, որը զարգացման լուրջ հեռանկար ունի: Ի տես բոլորիս՝ քաղաքում առանցքային բարեփոխումների ծրագրեր են մեկնարկել, որոնք միտված են տարիների ընթացքում կուտակված խնդիրների լուծմանը և մեր ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը:

Ես ավելի քան վստահ եմ, որ շուտով Արմավիրը կունենա մարզկենտրոնին հարիր դիմագիծ՝ զարգացած ենթակառուցվածքներով, ժամանցի վայրերով և վերականգնված ավանդույթներով:

Սիրելի արմավիրցիներ, թող բոլորիս մեկտեղված ջանքերի ու ցանկությունների արդյունքում իրականություն դառնա քաղաքի զարգացման մեր տեսլականը՝ ապրելու և արարելու լավագույն պայմաններ ապահովելով ներկա և ապագա սերունդների համար:
Ամենայն լավն ու բարին բոլորիդ: